

ՀՀ Արագածոտնի մարզի պատվիրակության այցը ՌԴ Լենինգրադի մարզ

11.06.2013



Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի հետ համագործակցության շրջանակում ՀՀ Արագածոտնի մարզի պատվիրակությունը հունիսի 7-10-ը այցելեց Լենինգրադի մարզ:

Պատվիրակությունը ղեկավարում էր մարզպետ Սարգիս Սահակյանը:

Ծրագրում նախատեսված էին մի շարք հանդիպումներ, մշակութային միջոցառումներ, քննարկումներ:

Հունիսի 8-ին հյուրերին ուղեկցեցին Լենինգրադի ծովային առելտրային նավահանգիստ „Ուստ Լուգա,, որին հաջորդեց մասնակցությունը Կինգիսեպ շրջանի Յամգորոգ քաղաքի օրվան նվիրված տոնահանդեսին:

Հաջորդ օրը՝ հունիսի 9-ին պատվիրակությունը այցելեց Կիրովս քաղաք: Այստեղ կազմակերպվել էր հանդիսավոր արարողություն՝ նվիրված Պյոտր Մեծին նվիրված հուշարձանի բացմանը եւ օծմանը: Հուշարձանը, որը ավերվել էր Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, վերանորոգվել է մեր հայրենակից, ներկայումս Լենինգրադաբնակ Յրաչյա Պողոսյանի բարերարությամբ: Ինչպես այստեղ, այնպես էլ „Սինյավինսկու բարձունքում,, դարձյալ Յրաչյա Պողոսյանի հովանավորությամբ տեղադրված խաչքարի մոտ տեղի ունեցան մշակութային հետաքրքիր միջոցառումներ, մարզպետ Սարգիս Սահակյանի կողմից զետեղվեցին ծաղկեպսակներ:

Այցի կարեւորագույն ծրագրերից մեկը Աշտարակ եւ Կիրովս քաղաքների միջեւ հունիսի 9-ին կնքված փոխգործակցության համաձայնագիրն էր: Փաստաթուղթը ստորագրեցին երկու քաղաքների ղեկավարները, համաձայն որի կողմերը համագործակցելու են տնտեսական, կրթական, մշակութային, մարզական եւ այլ բնագավառներում:

Եւրոյա այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպեց նաեւ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, ծանոթացավ նրանց առօրյային: Զննարկվեցին երկուստեք հետաքրքրող հարցեր: